ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՒ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

«Արարատ» ամսագիրը (1868–1919 թթ.) ոչ միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական առաջին հրատարակությունն էր («Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Սբ. Էջմիածնի»), այլ նաեւ հայագիտական առաջին հանդեսը կրոնագիտական ու պատմաբանասիրական ուղղվածությամբ: Ամսագիրը հրատարակման առաջին իսկ օրից արծարծում էր գրականության եւ արվեստի զարգացման խնդիրներ: «Արարատ»-ում զետեղվել են Ս. Մարությանի «Մեր ազգային թատրոններուն համառօտ տեսութիւնը»[1], Հովհ. Մուշեղյանի «Յորդոր ի սէր ազգային գրականութեան. Գրականութեան զարգացման հարցեր»[2] հոդվածները, տարբեր գրախոսականներ Ս. Ներսես Շնորհալու, Սեն-Մարտենի, Ռաֆֆու, Հ. Պարոնյանի, Գ. Սունդուկյանի, Միլտոնի, Ն. Մառի, հայ պատմիչների եւ այլոց երկերի վերաբերյալ, արծարծվել են գրական տեսության ոլորտի, տաղաչափության եւ այլ խնդիրներ: Ամսագրի դերը հայագիտության զարգացման գործում չափազանց մեծ էր հատկապես ԺԹ. դարի 90-ական թթ. եւ Ի. դարասկզբին: Այս շրջանը համընկնում է ժամանակի ամենահեղինակավոր բանաստեղծ եւ հասարակական գործիչ Հովհ. Թումանյանի գրական ու ազգային գործունեության ամենաեռուն շրջանին:

Բանաստեղծն ու «Արարատ»-ը տարեկիցներ են. նրանց ծնունդների միջեւ ընդամենը ամիսներ են: Բնականաբար, «Արարատ»-ը չէր կարող չանդրադառնալ ժամանակի ամենամեծ համարում ունեցող բանաստեղծի ստեղծագործությանը: «Արարատ»-ի 1911 թ. որոշ համարներում[3] լույս տեսան Արսեն Տերտերյանի «Յովհաննէս Թումանեան. Հայրենի եզերքի քնարերգուն», «Յովհաննէս Թումանեան. Հայրենի եզերքն իբրեւ

---

[1] *«Արարատ», 1870, Գ. (թիւ 11), էջ 279:*

[2] *Տե՛ս «Արարատ», Դ. (թիւ 12), էջ 316:*

[3] *Տե՛ս «Արարատ», 1911, Զ., էջ 498–502, Է., էջ 592–605, Ը., էջ 692–700, Թ., էջ 775–786, Ժ., էջ 854–860, ԺԲ., էջ 1012–1026:*

ապաստան», «Յովհաննէս Թումանեան. Հոգեկան խաղաղութիւն եւ ինքնալրացում» (Սիրո պոեզիայի վերլուծություն), «Յովհաննէս Թումանեան. Հայրենի եզերքի լաւատեսութիւն»[4] («Լոռեցի Սաքո» պոեմի վերլուծություն) հոդվածները: Այսպես՝ Ա. Տերտերյանի «Յովհաննէս Թումանեան. Հայրենի եզերքի քնարերգուն» աշխատությունը՝ 84 էջ, ամբողջությամբ լույս տեսավ ամսագրում: Այդ ուսումնասիրությունն իր ժամանակի համար նշանակալից երեւույթ էր: Լինելով գրականագիտության մեջ հոգեբանական դպրոցի հետեւորդ՝ Ա. Տերտերյանը Հովհ. Թումանյանի ստեղծագործության քննության ելակետը փոխում է՝ «վշտի ու թախիծի երգչից» նրան դարձնելով «հայրենի եզերքի քնարերգու»: Այդ բնութագրման շարակարգում քննադատը նկատի ուներ գրողի որդեգրած գեղարվեստական ուղղությունը եւ հանգրվանը: Առաջին անգամ Հովհ. Թումանյանի ստեղծագործության հոգեբանական եւ հուզական, խոհական-փիլիսոփայական բովանդակության բացահայտման լուրջ փորձ էր արվում: Իր կյանքի միայն այդ վեց տարում (1905–1911 թթ.) Հովհ. Թումանյանը ծանոթացավ իր մասին գրված գրականագիտական երկու ուսումնասիրության, որոնցում նրա ստեղծագործությունը դիտվում էր գեղարվեստական հետաքրքիր հարցադրումների՝ գեղեցիկի եւ կատարելատիպի (որին նա անվանում էր «անհայտ»), տաղանդի եւ հասարակական միջավայրի առնչակցության տեսանկյունից:

Այդ մենագրությունները գրված էին առաջինը՝ գործարար-վաճառականի, իսկ երկրորդը՝ մասնագետ-քննադատի կողմից: Հայ գրաքննադատական միտքը բանաստեղծի կյանքի հետագա տասնամյակներում առավել մեծ նվաճումների հասավ Թումանյանագիտության ասպարեզում, սակայն բանաստեղծի ստեղծագործությունների գիտական վերլուծություններն առաջինը հրապարակվեցին «Արարատ»-ի էջերում:

Ամսագրում տպագրվել են նաեւ Հովհ. Թումանյանի գեղարվեստական ստեղծագործությունները: «Արարատ»-ի 1902 թ. հունվարյան համարի կրոնական բաժնում Գալուստ Տեր-Մկրտչյանը տպագրում է Հովհ. Թումանյանի «Աստուծոյ սպառնալիքը» բանաստեղծությունը[5]: Այդ քերթվածի ինքնագրերից մեկը՝ 16 տող, վերնագրված էր «Մարգարեություն», իսկ երկրորդ ինքնագիրը՝ գրված մատիտով՝ 20 տող, վերնագրված էր «Աստծու սպառնալիքը» եւ ուներ «Աստվածաշունչ» ենթավերնագիրը:

---

[4] *Տե՛ս «Արարատ», 1912, Ա., էջ 38–48:*

[5] *Տե՛ս «Արարատ», 1902, Ա., էջ 12:*

Բանաստեղծությունը գրելիս հեղինակը աչքի առաջ է ունեցել Քրիստոսի՝ Մատթեոսի ավետարանի ԻԳ. գլխում ամփոփված խոսքերն ընդդեմ փարիսեցիների: Ավետարանական թեման բանաստեղծը մշակել էր նորովի՝ արձագանքելով իր ժամանակի խնդիրներին[6]*:*

Գալուստ Տեր-Մկրտչյանը, որ այդ բանաստեղծությունը բնորոշեց «գեղեցիկ ոտանաւոր», 1902 թ. փետրվարի 17-ին «Արարատ»-ի խմբագրական խորհուրդի անունից ամսագրին աշխատակցելու հրավեր է ուղարկում Հովհ. Թումանյանին: Բանաստեղծին հասցեագրված շրջաբերականում ասվում էր.

«Մեծարգոյ պ. Յովհաննէս Թումանեան,

Նորին Վեհափառութեան հայրապետական կոնդակով յանձն առնելով «Արարատ»-ի խմբագրութիւնը՝ պատիւ ունիմ դիմելու Ձեզ՝ խնդրելով Ձեր աշխատակցութիւնը: «Արարատ»-ը 2000 օրինակից աւելի տարածւում է մեծ մասամբ այնպիսի յետ ընկած գիւղերում, ուր ո՛չ մի հրատարակութիւն չէ մտնում: Ժողովրդին բազմակողմանի եւ օգտակար ընթերցանութեան նիւթ տալու նպատակով՝ խմբագրութիւնս անհրաժեշտ է համարում դիմել հայ գրականութեամբ եւ մամուլով հետաքրքրուող բոլոր ձեռնհաս անձնաւորութիւններին՝ համոզուած լինելով, որ միայն կարող ուժերի աջակցութեամբ հնարաւոր պիտի լինի դարձնել «Արարատ»-ը հետաքրքրական եւ օգտակար»[7]*:*

Ընդ որում, խմբագիրը բանաստեղծությունը զետեղում է ամսագրում այն պայմաններում, երբ «Արարատ»-ը չուներ գրական բաժին եւ առկա էր բանաստեղծությունների տպագրության արգելք: Գ. Տեր-Մկրտչյանն այդ մասին տեղեկացնում է Հովհ. Թումանյանին. «Արարատ»-ի 1898 թ. հաստատած ծրագրով իրաւունք չունենք բանաստեղծութիւններ հրատարակել եւ ընդհանրապէս ունենալ գրական բաժին: Բայց այս անգամ յաջողուեց Ձեր գեղեցիկ ոտանաւորը տպել կրօնական բաժնում: Յատուկ խնդրում եմ եւ այսուհետեւ շարունակել աշխատակցել՝ աշխատելով վերնագրերը կրօնական բաժնին յարմար մի բան դնել: Իբրեւ թղթակցի՝ Ձեզ ուղարկում է «Արարատ»: Խորին յարգանքով՝ Գ. Տ. Մկրտչեան»[8]*:*

---

[6] *Տե՛ս* ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հտ. 1 (այսուհետեւ՝* ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ), Երեւան, 1988, էջ 195:*

[7] *Բնագիրը պահվում է Հովհ. Թումանյանի թանգարանում: Առաջին անգամ այն հրապարակել է Պիոն Հակոբյանը. տե՛ս* ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ, *Երկու ակնարկ, «Թումանյան, ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հտ. 3, Երեւան, 1983, էջ 63:*

[8] *Անդ, էջ 64:*

Հովհ. Թումանյանն իր գեղարվեստական երկերը չի հարմարեցնում կրոնական բաժնին, սակայն «Արարատ»-ում 1915 թ. Դ.-Ե. միացյալ համարում տպագրվում է նրա եւս մեկ բանաստեղծություն՝ «Վերջին օրը»[9] (Եփրատի ափին դեմուդեմ եկած)։ Սա Հովհ. Թումանյանի հազվադեպ ծավալուն քերթվածներից է (92 տող)։ Գրվել է 1915 թ. ապրիլի 24-ին Դիլմանի ճակատամարտի ազդեցության տակ։ Բանաստեղծությունը Հովհ. Թումանյանի հայդուկի երգն էր, խմբապետի կերպարում այդ պահին դարավոր թշնամու դեմ հաղթանակներ արձանագրող Անդրանիկն էր։

«Արարատ»-ը տպագրում է մի քերթված, որը մխիթարանքի խոսք էր սգացող հայ ժողովրդին եւ միաժամանակ՝ ռազմի կոչ։ Բանաստեղծության մեջ կերտվում են հայ հայդուկի, խմբապետի ու կամավորի կերպարները, որոնք հաղթել էր գազանացած եւ արյան խրախճանքի դուրս եկած նենգ ու դավադիր թշնամուն։

Բանաստեղծության հիմնական հերոսներն են հայդուկը եւ նրա առաջնորդը՝ խմբապետը։ Եթե խմբապետը Դիլմանի ճակատամարտում սխրագործություններով աչքի ընկած Անդրանիկն էր, ապա հայդուկը մարմնավորում էր յուրաքանչյուր հայ զինվորին։ Նրանք երկուսն էլ անձնուրաց կռվում էին Եփրատի ափին։

Եթե այս բանաստեղծությունը համեմատելու լինենք Հովհ. Թումանյանի՝ հայրենասիրական մոտիվով գրված մյուս քերթվածների հետ, ապա այն չի կարող քննություն բռնել գրեթե նույն շրջանում գրված «Հայրենիքիս հետ»-ի կամ «Հոգեհանգիստ»-ի հետ։ «Վերջին օրը» ունի նախ եւ առաջ պատմաքաղաքական արժեք. այս բանաստեղծության մեջ միանգամայն ճշգրիտ ներկայացվում է Արեւմտյան Հայաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին, նկարագրվում է, թե այդ ժամանակ որտեղ էին Անդրանիկի զորքերը, կամավորները, եւ որտեղ՝ թշնամին։

Այս քերթվածը եւ՛ ռազմի ու միաբանվելու կոչ է, եւ՛ լավատեսություն ու հավատ, առանց որի անհնար էր խանդավառել ու ոգեւորել հայ կամավորին, հաղթահարել համընդհանուր խուճապը, սուգը եւ վիշտը։ Նրանում կար նաեւ պետականության, ազգի ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու հայի դարավոր նվիրական երազը. *չէ՞ որ հայդուկները գալիս էին «հայրենի դրոշը պարզած»։ Բանաստեղծությունն ավարտվում է «Մեծ տառապանքի վերջին օրն է սա» տողով, որն այդ օրերին Հովհ.*

---

[9] *Տե՛ս «Արարատ», 1915, Դ.-Ե., էջ 334–336։*

Թումանյանի համոզմունքն էր. համենայն դեպս, նա ուզում էր հավատալ, որ հայ ժողովուրդը վերջին անգամ էր տառապում Թուրքի ձեռքին։

1915 թ. մայիսի 3-ին, 5ին եւ 6ին Վասպուրականում ի պատիվ Անդրանիկի զորամասի եւ առհասարակ հայ կամավորների համար կազմակերպված երեկույթում Սիամանթոյի, Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների հետ միասին հնչեց նաեւ Հովհ. Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծությունը։ Բանաստեղծի խանդավառությունն իր հերթին ոգեւորեց հայ մարտիկներին[10]։

* * *

Ավելի քան հինգ տասնամյակի ընթացքում «Արարատ» ամսագիրն ունեցել է արժանավոր խմբագիրներ, որոնց նշանակում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նրանք ղեկավարում էին միաբաններից կազմված խմբագրական խորհուրդը։ Այդ խմբագիրներից (Աբել արք. Մխիթարյան, Խորեն վրդ. Ստեփանե, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, Գալուստ Տեր-Մկրտչյան, Գարեգին վրդ. Հովսեփյան (Գարեգին Ա. Հովսեփյան), Հուսիկ արք. Մովսիսյան, Աբել աբղ. Աբրահամյան, Ներսես վրդ. Միքայելյան եւ ուրիշներ) բանաստեղծը անձնական մտերմություն է ունեցել հատկապես Գալուստ Տեր-Մկրտչյանի (հայտնի նաեւ Միաբան անվամբ) եւ Գարեգին վրդ. Հովսեփյանի հետ։ Հովհ. Թումանյանը հաճախ է համագործակցել նրանց հետ ինչպես հայագիտության, այնպես եւ հասարակական գործունեության ոլորտում, ազգային-մշակութային կյանքի տարբեր խաչմերուկներում հանդիպել է նրանց ու գործել համատեղ՝ միեւնույն նպատակի՝ ազգային գոյապայքարում հաղթանակի հասնելու համար։

1902 թ. հունիսի սկզբներից առողջության վատթարացման պատճառով Գ. Տեր-Մկրտչյանը հրաժարվում է «Արարատ»-ի խմբագրի պաշտոնից, եւ հունիսի 16-ին նշանակվում է նոր խմբագիր։ Հովհ. Թումանյանն այլեւս որեւէ ստեղծագործություն «Արարատ»-ում չի տպագրում, սակայն երկու ազնվագույն հայերի բարեկամությունը շարունակվում է։

1910–1911 թթ. ստանձնելով «Հորիզոն»-ի խմբագրի պաշտոնը՝ Հովհ. Թումանյանը ձգտում էր նոր եւ հեղինակավոր անուններով համալրել աշխատակիցների ցանկը։ Բանաստեղծը փորձում էր թղթակիցներ ունենալ նաեւ երկրի սահմաններից դուրս։ 1911 թ. հոկտեմբերի 30-ին նա դիմում

---

[10] *Տե՛ս* Андраник Озанян, Документы и материалы, Вестник архивов Армении 1 (89) – 2 (90), сост. А. Арутюнян, Г. Арутюнян, В. Эвоян, С. Мирзоян, П. Сафян, Г. Шатирян, Ереван, *1991, էջ 443։*

է Սորբոնի համալսարանն ավարտած Գալուստ Տեր- Մկրտչյանին, որի գիտական գործունեությունը շատ բարձր էր գնահատում: Թեեւ առաջին հերթին հայտնում է թերթի նյութական հնարավորությունների մասին, բայց եւ միաժամանակ ընդգծում է. «Ամենաառաջին խնդիրն ինձ համար նրա բովանդակությունն է, իհարկե, եւ լուրջ աշխատակիցներն են: Դրա համար էլ քեզ դիմելով՝ խնդրում եմ քո աշխատակցությունը...»[11]*: Հովհ. Թումանյանը գիտակցում էր նաեւ, որ Գալուստ Տեր-Մկրտչյանի բանասիրական լուրջ եւ գիտական արժեքավոր հոդվածներն ընթերցող լայն շրջանակի համար «մի քիչ գրաբար կլինեն», բայց «մի մեծ բազմության համար շատ կլինի թանկ ու հասկանալի»[12]:*

Որպես խմբագիր՝ Հովհ. Թումանյանը ձգտում էր ոչ թե հարմարվել շարքային ընթերցողի մակարդակին, ճաշակին եւ պահանջներին, այլ բարձրացնել այդ պահանջներն ու մակարդակը: Բանաստեղծը հրաշալի գիտեր, որ անվանի հայագետի փորձն ու հմտությունները, գիտական հեղինակությունը կարող են շատ օգտակար լինել հասարակությանը. «Եւ որքան ցանկալի էր, որ մեր կյանքի, մեր աշխարհի, մեր լեզվի, մեր գրականության վրա լիներ խոսող, մենք մեզանից միանգամայն անտեղյակ մի ժողովուրդ ենք»[13]*: Միաբանի՝ Գալուստ Տեր-Մկրտչյանի պատասխանը չի պահպանվել, սակայն «Հորիզոն»-ին նա հազվադեպ էր նյութեր ուղարկում:*

Գալուստ Տեր-Մկրտչյանը 1904 թ. հունիսի 22-ին Ս. Էջմիածնում Հովհ. Թումանյանին նվիրում է իր լուսանկարը՝ «Սիրելի՛ Յովհ. Թումանեանին՝ Գ. Տէր-Մկրտչեանը» մակագրությամբ[14]:

Բանաստեղծն ու Գ. Տեր-Մկրտչյանը համագործակցում էին նաեւ Հայ գրերի 1500-ամյակի եւ տպագրության 400-ամյակի համազգային տոնակատարության շրջանակում, երբ վերջինս ընտրվել էր հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահ: Երկուսն էլ ձգտում էին հոբելյանն առիթ ծառայեցնել եւ ստեղծել գրականության, հայագիտության ու ազգային մշակույթի զարգացմանը նպաստող գրական եւ հայագիտական ազգային հիմնադրամներ: Բանտից դուրս գալուց անմիջապես հետո Հովհ. Թումանյանը դեռեւս Սանկտ Պետերբուրգում նախաձեռնում է պատմագիտական եւ հայագիտական հիմնադրամների ստեղծման

---

[11] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ, հտ. 10, Երեւան, 1999, էջ 129:*

[12] *Անդ:*

[13] *Անդ:*

[14] ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ, *Երկու ակնարկ, «Թումանյան. ուսումնասիրություններ եւ հրապարակումներ», հտ. 3, էջ 58:*

աշխատանքները։ Հասնելով Թիֆլիս՝ նա խորհրդակցում է Միաբանի հետ։ 1912 թ. մայիսի 25-ին գրում է. «Սիրելի՛ Գալուստ... Արդ, որովհետեւ 400-ամյակը շատ պատեհ դեպք է... վերջապես, մի գիտության օջախ ենք ունենալու, դու էլ մեր հանձնաժողովների հանձնաժողովի՝ կենտրոնականի նախագահն ես եւ, հետեւաբար, այս դեպքում ազգի մեջ կենտրոնական մի դիրք ունես, քեզ վրա է ընկնում մի շատ լուրջ գործ անելու պարտականությունը։ Շատ կուզենայի քո կարծիքն իմանալ Պետերբուրգի առաջարկի մասին...»[15]։

Բանաստեղծի դուստրը՝ Նվարդը, վկայում է Միաբանի նկատմամբ հոր հիացմունքի մասին. 1915 թ. օգոստոսյան մի օր բանաստեղծը, որ հաճախ էր այցելում Գալուստ Տեր-Մկրտչյանին, որոշում է դստերը ծանոթացնել մեծանուն հայագետի հետ։ Նվարդը պատմում է. «Մի երեկո հայրիկն ասաց. «Արի գնանք քեզ ծանոթացնեմ մի հետաքրքիր մարդու եւ մեծ գիտնականի հետ։ Հետո իմացա, որ նկատի ուներ հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան)...»[16]։

Գալուստ Տեր-Մկրտչյանը նույնպես բարձր էր գնահատում Հովհ. Թումանյանին՝ թե՛ իբրեւ գործիչ, թե՛ իբրեւ մտածող ու բանաստեղծ։ Նվարդ Թումանյանը հիշում է. «Դեպի անհունը» հայրիկի գրվածքների գլուխգործոցն էին համարում պատմաբան Հակոբ Մանանդյանը, Սիրական Տիգրանյանը, Միաբանը՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը, որն անգիր գիտեր...»[17]։

1915 թ. վերոնշյալ հանդիպումը երկու լավ բարեկամների կյանքում եղավ վերջինը։ Գալուստ Տեր-Մկրտչյանը վախճանվեց 1918 թ. հունիսի 13-ին։ Հովհ. Թումանյանը չէր կարող տեղեկանալ, քանի որ այդ պահին նա Լոռիում էր եւ Ղարաքիլիսայի անկումից հետո լոռեցի գաղթականների պատսպարմամբ, նրանց կյանքի փրկությամբ էր զբաղված։ Նույնիսկ Թիֆլիս այդ լուրը հասել էր մեծ ուշացումով։ Այդ մասին վկայում է Հովհ. Թումանյանի ամենամտերիմ բարեկամներից Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, որը միայն հուլիսի 10-ին Թիֆլիս գալով՝ մամուլի միջոցով հայությանը հայտնում է այդ գույժը։ Եւ միայն հուլիսի 14-ին «Հորիզոն»-ում լույս է տեսնում Սիրական Տիգրանյանի ընդարձակ մահախոսականը։ Հովհ. Թումանյանն այդ ծանր օրերին անգամ, մահից մազապուրծ Թիֆլիս հասնելով, գույժն առնելուց անմիջապես հետո կատարում է իր ընկերական պարտքը. իբրեւ Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ՝

---

[15] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Երկ, հտ. 10, Երեւան, 1999, էջ 150–151։*

[16] ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Հուշեր եւ զրույցներ, Երեւան, 2009, էջ 128։*

[17] *Անդ, էջ 169։*

1918 թ. հուլիսի 19-ին՝ Միաբանի մահից ավելի քան մեկ ամիս անց, Գյուտ քհն. Աղանյանին խնդրում է հոգեհանգստյան արարողություն կատարել[18]*։*

* * *

1907–1908 թթ. եւ 1915–1919 թթ. «Արարատ» ամսագիրը խմբագրել է Գարեգին վրդ. Հովսեփյանը։ Սակայն Հովհ. Թումանյանի մտերմությունը նրա հետ սկսվել էր շատ ավելի վաղ՝ դեռեւս 1900–1901 թթ., երբ Գարեգին վրդ. Հովսեփյանը վիրահայոց առաջնորդական փոխանորդ էր, Թիֆլիսի հոգեւոր խորհրդի նախագահ։

1902 թ. Թիֆլիսում հրատարակվում է արդեն փիլիսոփայության դոկտոր Գարեգին վրդ. Հովսեփյանի «Մանրանկարչութեան արուեստը հայոց մէջ» ուսումնասիրության առաջին մասը։ «Արեւելքից Արեւմուտք» հոդվածում Հովհ. Թումանյանը բարձր է գնահատում Ս. Էջմիածնի միաբանների դերը մասնավորապես Մխիթարյանների հետ մրցակցության շարակարգում։ Բանաստեղծը գրում է. «Սովորություն է մեզանում՝ Էջմիածնի միաբանությանը տեղի թե անտեղի նախատինք կարդալիս, ցույց տալ Մխիթարյան միաբանությունները եւ նրանց գեղարվեստական, գիտական-բանասիրական գործերը... այդօրինակ նախատինքից էջմիածինը փրկելու են նոր միաբանները՝ իրենց գրական-գիտական գործերով եւ, ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ խլելու են Մխիթարյաններից առաջնության պատիվը այդ ասպարեզում»[19]*։*

Հիշատակելով Սահակ վրդ. Ամատունու «Բառ ու բան», Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի, Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանի գիտական աշխատությունները՝ բանաստեղծն առանձնացնում է Կոմիտասին եւ Գարեգին վրդ. Հովսեփյանին։ Նա գրում է. «Հանրածանոթ Կոմիտաս վարդապետը զբաղված է ժողովրդական երգերը գրի առնելով եւ հայկական հին եղանակները վերականգնելու նշանավոր գործով։ Եւ ահա հայր Գարեգին վարդապետ Հովսեփյանը, որ հայտնի է իր մի քանի լուրջ աշխատություններով, այժմ գալիս է մի կարեւոր ուսումնասիրությունով՝ «Մանրանկարչութեան արուեստը հայոց մէջ»։ Մի ուսումնասիրություն, որի նշանակությունը շատ է մեծանում իր հետեւանքներով...»[20]*։ Բանաստեղծն այնուհետեւ անդրադառնում է հայ մանրանկարչության զարգացման 3 փուլերին։*

---

[18] Հովհ. Թումանյան, *Եկ, հտ. 10, Երեւան, 1999, էջ 292։*

[19] Հովհ. Թումանյան, *Եկ, հտ. 6, Երեւան, 1994, էջ 333։*

[20] *Անդ, էջ 335։*

1913 թ. մայիսին Գարեգին վրդ. Հովսեփյանը Թիֆլիսում դասախոսություններ էր կարդում մանրանկարչության, զարդանկարների, հայ միջնադարյան արվեստի վերաբերյալ, եւ Հովհ. Թումանյանը ոչ միայն ամենագործուն ունկնդիրներից, այլ նաեւ խրախուսողներից մեկն էր: Հովհ. Թումանյանը Գարեգին վրդ. Հովսեփյանի ուսումնասիրության մասին իր գրախոսականում գրում է. «Թիֆլիսի հայ հասարակությունը պետք է գնա այս դասախոսություններին, որ պատմության մեջ նոր հորիզոններ են բաց անում իր համար եւ նոր փառք են ավելացնում իր հին փառքերին...»[21]:

Բանաստեղծը «Հորիզոն»-ին աշխատակցելու եւ այն խմբագրելու տարիներին ընդամենը երեք հայագետների՝ Ն. Մառի, Ա. Չոպանյանի եւ Գ. վրդ. Հովսեփյանի ուսումնասիրությունների վերաբերյալ է գրախոսականներ գրել: Նրանց բոլորին տված Թումանյանական գնահատականները անկյունաքարային նշանակություն ունեն եւ գրապատմական լուրջ արժեք են ներկայացնում հայ միջնադարյան մշակույթը ուսումնասիրողների համար:

1904 թ. ապրիլի վերջին Հովհ. Թումանյանը ուղեւորվում է Երեւան եւ Ս. Էջմիածին: Մայիսի 1-ին բանաստեղծը հասնում է Երեւան ու իջեւանում Գարեգին վրդ. Հովսեփյանի տանը: Ժամանելու առաջին իսկ օրվանից նա Գարեգին վարդապետի եւ Ս. Սարգիս եկեղեցու հոգեւորականների ուղեկցությամբ ծանոթանում է Երեւանի հնություններին, տեսարժան վայրերին ու հիշատակարաններին: Բանաստեղծի այցելությունը, անտարակույս, պայմանավորված է եղել եկեղեցական գործիչների, մասնավորապես Գարեգին վրդ. Հովսեփյանի հրավերով: Ըստ էության՝ Հովհ. Թումանյանը Երեւան էր հրավիրվել մայրաքաղաքի եկեղեցիներից մեկի բացմանը ներկա լինելու համար: Ըստ բանաստեղծի երկերի գիտական առաջին հրատարակության ծանոթագրությունների՝ խոսքը վերաբերում էր Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, սակայն վերջինս կառուցվել է 1869 թ. եւ սկսել է գործել 1900 թ.: Այն, որ Հովհ. Թումանյանը մասնակցել է Երեւանի ինչ-որ եկեղեցու բացմանը եւ միայն դրանից հետո է մեկնել Ս. Էջմիածին, վկայում է նաեւ ինքը՝ բանաստեղծը, իր 1904 թ. մայիսի 2-ի նամակում[22]:

Գարեգին վրդ. Հովսեփյանը բանաստեղծին ցույց է տալիս զանազան հուշարձաններ ու հիշատակարաններ, նաեւ Երեւանի «հին ու նոր»

---

[21] *Անդ, էջ 336:*

[22] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ, հտ. 9, Երեւան, 1997, էջ 427:*

մզկիթները։ Հինը Ռաջափ փաշայի 1725 թ. կառուցած թուրք-օսմանական մզկիթն էր, իսկ նորը՝ Երեւանի ամենավերջին՝ Հուսեին խան Սարդարի կառուցած մզկիթը, որը կոչվել էր Աբաս Միրզայի անունով։ Ընդ որում, «հին» մզկիթը 1827 թվականից վերածվել էր ռուսական եկեղեցու։

1912 թ. հոկտեմբերից Հովհ. Թումանյանը, ստանձնելով Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահի պաշտոնը, ղեկավարում եւ կազմակերպում էր հայ գրական կյանքը, նախաձեռնում հայ արվեստին ու հայագիտությանը, նաեւ ազգային-քաղաքական խնդիրներին վերաբերող բազմաթիվ դասախոսություններ, երեկույթներ։ Այդ դասախոսություններին ներկա էին լինում հազարավոր ունկնդիրներ։ Իր գրական գործունեությամբ Հովհ. Թումանյանը նպաստում էր հայ հասարակության զարգացմանը, բարձրացնում նրա կրթվածության աստիճանը։ Բնականաբար, դասախոսներ հրավիրելիս Հովհ. Թումանյանն ընտրում էր հայ գիտական ու մտավոր սերուցքը հանդիսացող լավագույն մասնագետներին։ Հետեւաբար՝ բանաստեղծը չէր կարող շրջանցել մի այնպիսի նշանավոր գիտնականի, ինչպիսին Գարեգին վրդ. Հովսեփյանն էր։ 1913 թ. հուլիսի 11-ին նա դիմում է Ս. Էջմիածին՝ Գարեգին վրդ. Հովսեփյանին, տեղեկացնում հայ բանաստեղծությանը, նկարչությանն ու հայ եկեղեցական երաժշտությանը նվիրված երեկույթներ կազմակերպելու իր նախաձեռնության մասին եւ խնդրում նրա աջակցությունը. «Ազնիվ բարեկա՛մ Գարեգին հայր սուրբ, բանաստեղծության մասին կխոսի Աղբալյանը, բայց դեռ դիմելու եմ ուրիշներին... Երաժշտական մասի.... համար խնդրել եմ Կոմիտաս վարդապետին, իսկ Ձեզ խնդրում եմ, որ հաճնն առնեք նկարչական մասը կազմակերպելու, խոսելու, մոգական լապտերով ցույց տալու, վերջապես ինչպես որ Դուք կկամենաք...»[23]։ *Օգոստոսի 4-ին Գարեգին վրդ. Հովսեփյանը պատասխանում է Հովհ. Թումանյանին եւ խոստանում կարդալ դասախոսություն հայ եկեղեցական երաժշտության վերաբերյալ՝ նոյեմբերի 15–30-ն ընկած ժամանկահատվածում*[24]։

Բանաստեղծի որդին՝ Համլիկը, 1915 թ. սովորում էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանում։ Բագրատ եպս. Վարդազարյանին ճեմարանի տեսուչի պաշտոնում փոխարինել էր Ստ. Մալխասյանը։ Հովհ. Թումանյանը դժվարությամբ էր որդուն Ներսիսյան դպրոցից տեղափոխել Գեւորգյան հոգեւոր ճեմարան։ 1914 թ. սեպտեմբերի 19-ին ճեմարանի տեսուչ

---

[23] *Հովհ. Թումանյան, Եվժ, հտ. 10, էջ 181։*

[24] *ԳԱԹ, ԹՖ, թիվ 291։*

Ստ. Մալխասյանին ուղղված նամակում բանաստեղծը գրում է. «Էն որ ասած է, թե ուրիշի համար լացողն իրեն համար կխոռանա, այսինքն՝ իր աչքերը կկուրացնի, հալալ իմ գլուխն է եկել: Ամբողջ օրը էս ու էն ընկերության ետեւից, էս ու էն ժողովներում, սրա-նրա համար տեղ ու պաշտոն գտնելու ետեւից՝ իմ երեխաներին գրեթե անտեր թողեցի, եւ էս տարի միանգամից մի քանիսը անհաջողության մատնվեցին իմ անհոգության ու իրենց անտերության պատճառով»[25]:

Համլիկն ընդունվել էր ճեմարան վճարովի հիմունքներով՝ «իբրեւ թոշակառու սան»՝ տարեկան 200 ռ. վճարելու պայմանով[26]: Հովհ. Թումանյանը 100 ռ. պետք է վճարեր 1914 թ. սեպտեմբերի առաջին օրերին, իսկ մյուս 100ը՝ 1915 թ. հունվարին: Բանաստեղծը չէր հասցրել վճարել ուսման վարձը, քանի որ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, նաեւ Հայոց հայրապետ Գեւորգ Ե. Սուրենյանցի հանձնարարությամբ, գտնվում էր Արեւմտյան Հայաստանում՝ Կովկասյան ռազմաճակատում: Համլիկի հեռացման խնդիրը 1915 թ. ամռանը դառնում է օրակարգի հարց: Հեռացման դեպքում 18-ամյա Համլիկին անմիջապես կտանեին բանակ, եւ ամենեւին ոչ Կովկասյան ռազմաճակատ: Եւ Հովհ. Թումանյանը 1915 թ. հուլիսի 25-ին հեռագրում է Գարեգին վրդ. Հովսեփյանին՝ խնդրելով գրավոր վկայություն ուղարկել Համլիկի՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սան լինելու մասին, որպեսզի ներկայացնի Թիֆլիսի քաղաքային զինվորական ատյանին[27]: Հեռագիրը հասցեատիրոջը չի հասնում՝ Գարեգին վարդապետի՝ Ս. Էջմիածնում չլինելու պատճառով[28]: Այնուհետեւ 1915 թ. օգոստոսի 15-ին Հովհ. Թումանյանը, լինելով Ս. Էջմիածնում եւ զբաղվելով որբախնամ գործունեությամբ, նպատակահարմար է գտնում վերստին դիմել ճեմարանի տեսչի պաշտոնը ստանձնած Գարեգին վրդ. Հովսեփյանին[29]: Գարեգին վրդ. Հովսեփյանը անմիջապես ի պաշտոնե դիմում է Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին եւ միաժամանակ միջնորդում բանաստեղծին ուսման պարտքից ազատելու եւ Համլիկի՝ ճեմարանական կրթություն ստանալու իրավունքը վերականգնելու համար՝ «Ի հարգանս պ. Հովհ. Թումանյանի գրական եւ հասարակական գործունեության»[30]:

---

[25] Հովհ. Թումանյան, *Երկ, հտ. 10, էջ 217:*
[26] *Ստ. Մալխասյանի 1914 թ. հոկտեմբերի 25ի նամակը. ԴԱԹ, ԹՖ, թիվ 1630 (1124):*
[27] Հովհ. Թումանյան, *Երկ, հտ. 10, էջ 226:*
[28] *ՀՀԱԱ, ֆ. 312, թ. 24, էջ 14:*
[29] Հովհ. Թումանյան, *Երկ, հտ. 10, էջ 229:*
[30] *Անդ, էջ 604:*

Խորհրդային տարիներին հենց սկզբից հետեւողական հալածանք է սկսվում Ս. Էջմիածնի հոգեւոր գործիչների, հատկապես հայագետների նկատմամբ։ «Կարմիր աստղ» օրաթերթում «Բանբեր»-ի մասին տպագրված գրախոսականում տարբերություն չի դրվում այդ ամսագրի ու «Արարատ»-ի միջեւ, քանի որ «Բանբեր»-ում «...նույն Մեսրոպ, Գարեգին, Երվանդ վարդապետները միացած «Արարատ»-ի սովորական աշխատակիցների հետ» *իրականացնում էին* «տիրացուական հրատարակություն»[31]։ *Հովհ. Թումանյանը վրդովված էր։ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանին հասցեագրած նամակում բանաստեղծը գրում է.* «Այնուամենայնիվ, վշտանալու առիթ կա, եթե ոչ հուսահատվելու։ Փոխանակ օգտվելու թե՛ fn, թե՛ Գարեգին եպիսկոպոսի ուժերից, ետ են մղում...»[32]։

Երկու մեծ հայերի հայրենասիրությունը, ազգային գոյապայքարում զոհաբերվելու պատրաստակամությունն արտահայտվեց նաեւ 1918 թ. գարնանը, երբ երկուսն էլ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օրերին պատմական դեպքերի հորձանուտում էին, հայոց գոյամարտի կիզակետում, մեր պատմության հերթական Ավարայրի ճակատամարտում, մեկը՝ Ղարաքիլիսայում, մյուսը՝ Սարդարապատում հանդես էին գալիս ոգեշունչ կոչերով, ոտքի հանում ժողովրդին եւ մղում կենաց մահու կռվի դարավոր թշնամու դեմ։ Հովհ. Թումանյանն 1918 թ. մայիսի 16-ին ասում էր. «Հավաքվեցե՛ք մեր մութ անտառների նման, կանգնեցե՛ք անսասան մեր սարերի նման, կրակ թափեցեք եւ զարկեցեք մեր սարերի կայծակների նման, թող թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ.... Լոռու սարերից անցնել չի կարելի»[33]։

Նույն օրերին՝ Սարդարապատի հերոսամարտի նախաշեմին, Գարեգին եպս. Հովսեփյանը[34] *զգուշացնում էր՝ ո՛չ օգնական ուժի ակնկալիք կա, ո՛չ էլ նահանջի ուղի, եւ միակ ելքը կա՛մ հաղթելն է, կա՛մ հայրենի սրբազան հողի վրա պատվով մեռնելը։ Նա, Թումանյանական ոգով դիմելով հայությանը, ասում էր.* «Հե՛տ նայեցեք, մեզ մնացել են Երեւանն ու Էջմիածինը... Եթե հերոսության չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլեւս չի լինի ո՛չ հայ, ո՛չ հայի հայրենիք... փրկենք հայրենիքը, փրկենք մեր պատիվը, հայի պատիվը...»[35]։

---

[31] *«Կարմիր աստղ», Թիֆլիս, 1922, թիվ 174, 176, օգոստոսի 5, 8։*

[32] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ, հտ. 10, էջ 428։*

[33] ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *ԵԼԺ, հտ. 7, Երեւան, 1995, էջ 354։*

[34] *Գարեգին վրդ. Հովսեփյանը եպիսկոպոս է ձեռնադրվել 1917 թվականին։*

[35] http://www.magaghat.am/archives/25508:

Այսպես՝ Ամենայն հայոց բանաստեղծի մտերմիկ հարաբերությունները եկեղեցական անվանի հայրերի, «Արարատ» ամսագրի խմբագիրներից հատկապես Գալուստ Տեր-Մկրտչյանի եւ Գարեգին վրդ. Հովսեփյանի հետ հայ աշխարհիկ ու հոգեւոր այրերի հոգեւոր հարազատության, նրանց միասնականության ուշագրավ արտահայտություններից է, իսկ նրանց անկեղծ բարեկամությունը՝ մեր մշակույթի պատմության ուշագրավ էջերից։

РЕЗЮМЕ

Ованес Туманян и журнал «Арарат» – ровесники: разница в их возрасте составляет всего лишь несколько месяцев. Естественно, «Арарат» не мог обойти стороной творчество самого авторитетного поэта эпохи. На страницах периодического органа было опубликовано исследование Арсена Тертеряна «Ованес Туманян — певец родного края» (объем: 84 страницы). В журнале были опубликованы также художественные произведения поэта — стихотворения «Угроза Создателя» и «Последний день».

На протяжении более пятидесяти лет у журнала «Арарат» были достойные редакторы, которые возглавляли редакционную коллегию, сформированную из членов конгрегации. Среди них: архиепископ Абел Мхитарян, Хорен Степане, Карапет Тер-Мкртчян, Галуст Тер-Мкртчян, Гарегин Овсепян, архиепископ Усик Мовсисиян, Абел Абраамян, Нерсес Микаелян и другие. Ованес Туманян особенно сблизился с Галустом Тер-Мкртчяном и Гарегином Овсепяном, часто и охотно сотрудничал с ними как в области арменоведения, так и общественной, патриотической и национальной деятельности. Поэт часто встречался с ними на разных перекрестках культурной и национальной жизни. Их взаимное сотрудничество служило общей цели — достижению победы в борьбе за национальное благополучие.

SUMMARY

Hovhannes Tumanyan and “Ararat” magazine are of the same age: the difference in their age is only a few months. Naturally, “Ararat” could not ignore the work of the most authoritative poet of the era. The periodical edition included Arsen

Terteryan's study entitled "Hovhannes Tumanyan — singer of his native land" of 84 pages. The magazine also published the poet's works of art — the poems "Threat of God" and "The Last Day".

For more than five decades, "Ararat" magazine had worthy editors who led the editorial board formed from the Brotherhood members of Holy Etchmiadzin. Among them were Archbishop Abel Mkhitaryan, Khoren Stepane, Karapet Ter-Mkrtchyan, Galoust Ter-Mkrtchyan, Karekin Hovsepian, Archbishop Husik Movsisyan, Abel Abrahamyan, Nerses Mikayelyan and others. Hovhannes Tumanyan became especially close with Galoust Ter-Mkrtchyan and Karekin Hovsepian, often and willingly cooperated with them both in the field of Armenian studies and in public, patriotic and national activities. The poet often met with them at various crossroads of cultural and national life. Their mutual cooperation served a common goal — to achieve victory in the struggle for national well-being.